

«Յուրաքանչյուր մարդ ունի ազատ տեղաշարժի եւ յուրաքանչյուր պետության շրջանակներում բնակության վայրի ընտրության իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած երկիր, այդ թվում նաեւ սեփականը, լքելու եւ իր երկիր վերադառնալու իրավունք»:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948թ., հոդված 13

Մարդկության պատմությունը մեծապես միգրացիայի պատմությունն է: Դարերի ընթացքում մարդիկ տեղափոխվում էին մի նպատակով՝ գտնել կյանքի եւ աշխատանքի ավելի լավ պայմաններ: Ըստ Համաշխարհային բանկի տվյալների՝ 2010թ. աշխարհում գոյություն ուներ 215 մլն գաղթական, ինչը 24 մլն-ով ավելի է, քան 2005թ.: Իսկ ըստ ՄԱԿ-ի Տնտեսական եւ սոցիալական գործերի դեպարտամենտի՝ եթե գործընթացն այսպես շարունակվի, ապա 2050թ. գաղթականների թիվը կկազմի 405 մլն: Համաշխարհային տնտեսական ճգնաժամը միգրանտներին ավելի խոցելի դարձրեց աշխատաշուկայում, սակայն 2010թ. դրամական փոխանցումները չկվազեցին՝ կազմելով 325 մլրդ ԱՄՆ դոլար: 2009թ. միգրանտների դրամական փոխանցումները դեպի զարգացող երկրներ կազմեցին դրանց ՀՆԱ-ի 1.9%-ը, իսկ առավել աղքատ երկրների ՀՆԱ-ի 5.4%-ը: ՀՀ-ում տնային տնտեսությունների մոտ 36%-ը արտասահմանից ստանում է դրամական փոխանցումներ: Աշխարհում դրամական փոխանցումներ ստացող առաջատար հինգ երկրների (Չինաստան, Չինաստան, Մեքսիկա, Ֆիլիպիններ, Ֆրանսիա) համեմատ՝ ՀՀ-ում մեկ շնչի հաշվով ստացվող դրամական փոխանցումների ցուցանիշը այդ երկրների համապատասխան ցուցանիշը գերազանցում է մոտ 2.5-3.0 անգամ: Պարզ է, որ բնակչության միգրացիայի համեմատ ինտելեկտուալ միգրացիայի բաժինն այդքան էլ մեծ չէ, ըստ գնահատականների՝ 2.7-3%, սակայն անհամեմատ ավելի կարեւոր դեր է խաղում ինչպես ընդունող, այնպես էլ արտագաղթի երկրների սոցիալ-տնտեսական կյանքում, հատկապես սկսած 1990-ականներից³, երբ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, գլոբալացումն ու գիտելիքահենք տնտեսության ժամանակաշրջանը երեւույթը դարձրին առավել արտահայտված: Սակայն դրանով իսկ զարգացող, դոկոր երկրները զրկվում են ամենահարկավաճյուտ եւ թանկարժեք՝ մարդկային ռեսուրսից, հետեւաբար եւ զարգացման հնարավորությունից:

Հայտնի է, որ մասնագետների պատրաստման եւ վերապատրաստման համակարգն իր իներտության պատճառով չի կարող տնտեսությանն անհրաժեշտ կադրերով ապահովել կարճ ժամանակահատվածում, հատկապես երբ խոսքը վերաբերում է հազվագյուտ մասնագիտություններին, տաղանդավոր գիտնականներին եւ այլն: Այդ պատճառով էլ նորարարության ոլորտում համաշխարհային մրցակցային պայքարի սրման պայմաններում «արտասահմանյան ուղեղների» ներգրավումը, հատկապես՝ զարգացող եւ անցումային տնտեսությամբ երկրներից, ինչպես Հայաստանն է, որը զգալի միջոցներ է ծախսել կադրերի պատրաստման եւ վերապատրաստման վրա, դառնում է այդ պայքարի առավել արդյունավետ մեթոդներից մեկը, քանզի ներգաղթողները մեծ ներդրում են ունենում ընդունող երկրների տնտեսությունների զարգացման գործում: Այդ մասնագետները, ինչպես նաեւ տվյալ երկրի բուհերի օտարերկրյա շրջանավարտները համարվում են գիտելիքահենք տնտեսության համար մարդկային կառավարման կարևոր գործիչներ: Եթե պաշտոնական վիճակագրությունը եւ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետության ծառայությունը մշտապես տեղեկատվություն են տրամադրում գաղթի, ուղեւորափոխադրումների վերաբերյալ (տես՝ աղյուսակը), ապա ՀՀ-ից ուղեղների արտահոսքի մասին տեղեկատվությունը հստակ չէ՝ նախ այն պատճառով, որ շատ հայ գիտնականներ ոչ թե պաշտոնապես արտագաղթում են, այլ պայմանագրային աշխատանքի են մեկնում, ինչը հաճախ վերածվում է անվերադարձ միգրացիայի:

Ինչպես երեւում է աղյուսակից, 2004թ. համեմատ 2005թ. արձանագրվել է ուղեւորափոխադրումների հաշվեկշռի դրական մնացորդի շուրջ 6 անգամ աճ, իսկ 2006թ.՝ 73.6%, սակայն 2007թ. մնացորդը բացասական էր, որը 2010թ. ավելացավ 9 անգամ: Տարիների ընթացքում ՀՀ-ում արտագաղթի բազմաթիվ տեսակներից առանձնացել է տնտեսական պատճառներով կատարվող արտագաղթը: 1990-ականներին աշխատանքի եւ պրոֆեսիոնալ զբաղվածության բացակայության, ինչպես նաեւ բավարար կենսամակարդակի ապահովման անհնարինության պատճառով արտագաղթողների թվում տղամարդիկ 69% էին, կանայք՝ 39%, իսկ 2007-09թթ. 15 եւ բարձր տարիքի արտագաղթողներից անվերադարձ մեկնել են ամենաշատը Ռ-7, բացառությամբ սեզոնային աշխատանքի (96.6%): Պատճառներից առաջինը աշխատելն է (81.8%), աշխատանք փնտրելը (79.9%) եւ աշխատանքի բացակայությունը (74.4%)⁴: Անհրաժեշտ է նշել նաեւ, որ ԱԳՆ տվյալների համաձայն՝ 2004-09թթ. ընթացքում զգալի է եղել ՀՀ կամավոր վերադարձածների թիվը, մասնավորապես՝ Ռ-7-ից (30497), ԱՄՆ-ից (1961), Գերմանիայից (1307), Ֆրանսիայից (640) եւ այլ երկրներից⁵: Անշուշտ, եղել են նաեւ համապատասխան փաստաթղթեր ունեցողներ, ովքեր վերադարձել են առանց դեսպատատների կամ հյուպատոսությունների իմացության: Ընդհանուր առմամբ՝ ՀՀ տնտեսական արտագաղթի կառուցվածքում կարելի է առանձնացնել հետեւյալ հիմնական տեսակները.

- որակավորում չունեցող եւ ցածր որակավորում ունեցող աշխատուժի գաղթ՝ սկզբում ժամանակավոր աշխատանքի համար, ինչը հետագայում անվերադարձ բնույթ կրեց,
- սկզբից եւեթ արտագաղթ՝ արտասահմանում մշտական աշխատանքի համար,

ՈՒՂԵՂՆԵՐԻ ԱՐՏԱՀՈՍՔԸ ԵՎ ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՆ

Ամայա ԳՎԼՍՅԱՆ
ԵՊՀ
կառավարման եւ գործարարության
ամբիոնի աւսիտենտ,
տնտեսագիտության
թեկնածու



Արտաքին միզրագիայի սալրոն և ուղեւորահոսքի ծվալները՝ ըստ ՀՀ սահմանային անցման կետերում տարվող ուղեւորների հաշվառման տվալների (2000-2011թթ., հազ. մարդ)⁴

Տարեթիվ	Ժամանել են	Մեկնել են	Միզրագիայի սալրոն (+,-)
2000	399.7	457.2	-57.5
2001	508.2	568.6	-60.4
2002	590.7	593.4	-2.7
2003	618.3	628.5	-10.2
2004	739.9	737.8	2.1
2005	845.8	833.3	12.5
2006	983.7	962.0	21.8
2007	1293.6	1296.8	-3.2
2008	1397.2	1420.2	-23.1
2009	1432.0	1457.0	-25.0
2010	1745.1	1774.9	-29.9
2011*	974.9	1053.6	-78.6

* Տվալները՝ հունվար-հուլիսի կտրվածքով

● բարձր որակավորում ունեցող մասնագետների, ինչպես նաեւ գործարարների և արտասահմանյան նախագծեր իրականացնող մասնագետների «չրջանառություն»,

● զարգացած պետությունների կողմից կազմակերպվող միզրագիա՝ մասնագիտական կրթություն ստանալու նպատակով, արտասահմանյան շուկաներում առաջխաղացման նպատակով:

Բարձրորակ մասնագետների արտագաղթի հետեւանքով աշխատանքի շուկայում խախտվում է աշխատուժի առաջարկը մի շարք մասնագիտությունների գծով, վտանգվում է գիտատեխնիկական ներուժի զարգացումը: Զանի որ արտագաղթն ուղեկցվում է նաեւ կապիտալի արտահանմամբ, դա կարող է վնասել երկրի ֆինանսական և արտաքին տնտեսական դիրքերը: Բացի այդ, քանի որ Հայաստանում նկատվում է նաեւ գաղթ՝ բարձր գործազրկության շրջաններից հատկապես մայրաքաղաք, ապա վտանգվում է նաեւ տարածաշրջանների աշխատանքային և տնտեսական ներուժը: Ավելին՝ տեղի է ունենում նաեւ «ներքին արտահոսք» գիտության ոլորտից դեպի այլ, իրենց մասնագիտության հետ հաճախ կապ չունեցող ոլորտներ: Չբաղվածության ամենախիստ կրճատումը գիտության ոլորտում տեղի ունեցավ 1990-95թթ. ընթացքում՝ գրեթե 2.4 անգամ, հաջորդ հնգամյակում՝ եւս 1.6 անգամ: Պարզ է, որ զբաղվածության կրճատում տեղի է ունեցել նաեւ այլ ճյուղերում, սակայն հենց գիտական ներուժի «կորուստն է», որ հետագայում ունենում է անդամնալի հետեւանքներ՝ ինչպես երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, այնպես էլ հասարակական ողջ կյանքի բոլոր կողմերի վրա: Ի դեպ՝ բարձրագույն և հետբուհական կրթությամբ գործազրկությունը ՀՀ-ում նույնպես բարձր է եւ 2000-2010թթ. տատանվել է 12-14% սահմաններում, ինչը վկայում է նաեւ այն փաստը, որ գիտության և գիտատար շատ ճյուղերում չեն ստեղծվում նոր աշխատատեղեր: Բացի այդ, 2005-09թթ. հետազոտություններ եւ մշակումներ կատարող կազմակերպությունների քանակը նվազել է 102-ից մինչեւ 83, գիտահետազոտական աշխատանքներում զբաղվածների թիվը գրեթե չի փոխվել՝ կազմելով 5401-5895, իսկ ասպիրանտների թիվը կրճատվել է՝ 1528-ից նվազելով մինչեւ 1393⁵, քանզի երիտասարդները հիմնականում չեն ցանկանում ընդգրկվել գիտության ոլորտում՝ առաջին հերթին որոշակի կենսամակարդակի ապահովման անհարկության պատճառով:

ՀՀ ԿԳՆ-ի կառավարության քննարկմանն է ներկայացրել գիտության ոլորտի զարգացման 2011-2015թթ. ռազմավարական ծրագրի եւ միջոցառումների նախագիծ, որի իրագործումը հնարավոր է կառավարության, մասնավոր թիզների, քաղաքացիական հասարակության ինստիտուտների և Սիյուռքի ջանքերի զուգակցմամբ: Նշենք, որ 2008-10թթ. ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառին հատկացված ֆինանսական միջոցների ծավալները կազմել են ՀՆԱ-ի 0.19%, 0.27%, 0.24%-ը, ինչը զգալի գիշում է եւ՝ զարգացած եւ՝ զարգացող երկրների ցուցանիշներին: Օրինակ՝ ԵՄ 27 պետություններում ոլորտին հատկացվող միջոցները միջինը կազմել են ՀՆԱ-ի 1.77%-ը,

բալթյան պետություններում՝ 0.6-1.3%-ը, ՌԴ-ում՝ 1%-ը, իսկ ամենաբարձր ցուցանիշը Իսրայելում է՝ 4.9%: Աշխարհում գիտության վիճակի վերաբերյալ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2010թ. գիտական հաշվետվության համաձայն՝ 2000-08թթ. գիտական իրապարակումների թիվով Կենտրոնական եւ Արեւմտյան Ասիայում Հայաստանն առաջատարներից է եւ զիջում է միայն Իսրայելին, սակայն գիտականին տրվող տարեկան միջին աշխատավարձը 17 անգամ գիշում է Եվրոպայում աշխատող գիտականի աշխատավարձին⁶: 2010թ. հուլիսի 1-ի դրությամբ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական ծրագրերում եւ թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցողների թիվը 3127 է, եւ նրանց միջին տարիքը 56 է, իսկ 60 եւ ավելի տարիք ունեցողներինը կազմում են 47%, 27-35 տարեկանները՝ ընդամենը 15%¹⁰: Սա բացատրվում է ոլորտում ընդգրկվածների աշխատավարձերի ցածր մակարդակով, մասնավորապես՝ 2011թ. պետբյուջեի ծրագրով ոլորտում աշխատավարձը կազմում է մոտ 60 հազ., այսինքն՝ միջին աշխատավարձի մոտ 57%-ը, այնինչ 2000թ. համապատասխան ցուցանիշը 72% էր, իսկ 2005-ին՝ 84.8%¹¹: Նշված ցուցանիշները նույնպես չափազանց ցածր են, սակայն այսօր իրավիճակը սրվել է, եւ գիտելիքահեղեղ տնտեսություն կառուցող Հայաստանը պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկի այն փրկելու նպատակով, հակառակ դեպքում կհայտնվեն կարգերի բացակայության բարդ խնդրի առջեւ:

Պարզ է, որ «ուղեղների արտահոսքի» ազդեցությունը ազգային եւ տնտեսական անվատանգության վրա քանակապես շատ դժվար է հաշվարկել, ուստի՝ փորձենք ներկայացնել որոշ տվալներ, որոնք անուղղակիորեն վկայում են երեւութի ծավալների մասին: Ինչպես ցույց են տալիս ՀՀ ԱԿԾ եւ ԱԿԿ-ի Բնակչության հիմնադրամի 2007թ. իրականացրած՝ արտաքին եւ ներքին միզրագիայի հետազոտության տվալները, ռեէմիգրանտների 24.8%-ն ունեցել է միջնակարգ մասնագիտական, 21.1%-ը՝ բարձրագույն եւ հետբուհական կրթություն, իսկ բացակաների համապատասխան ցուցանիշներն են՝ 16.1% եւ 18.7%¹²: Նախ՝ «ուղեղների արտահոսքի» հետեւանքով ՀՀ տեխնոլոգիապես ետ է մնում զարգացած երկրներից: Երկրորդ՝ ինտելեկտուալ արտագաղթը հանգեցրել է եւ, եթե միջոցառումներ չձեռնարկվեն, կհանգեցնի հայրենական գիտական շատ դպրոցների քայքայման, որոնցից շատերը զբաղեցրել ու դեռեւս շարունակում են զբաղեցնել առաջատար դիրքեր համաշխարհային գիտության մեջ (մաթեմատիկա, ֆիզիկա, կենսաբանություն և այլն): Ինչպես ցույց է տալիս մի շարք երկրների փորձը, գիտական դպրոցների վերականգնումը շատ ավելի բարդ գործընթաց է, քան քայքայված տնտեսության վերականգնումը: Պարզ է՝ եթե դատենք գիտության տեսանկյունից, ապա ավելի արդյունավետ կարելի է համարել այն իրավիճակը, երբ գիտականները ոչ թե գաղթում են գիտության հետ կապ չունեցող ոլորտներ երկրի ներսում, այլ արտագաղթում են՝ մալով նույն ոլորտում: Այս դեպքում նրանք, աշխատելով արտերկրում, կպահպանեն գիտական կապերը հայրենիքի հետ, եւ միայն պետությանն է վերապահվում նրանց հայրենիք վերադարձնելու նպիտակական գործը:

Աշխարհում տնտեսության գիտատար ճյուղերի զարգացման հետ մեկտեղ խիստ մեծանում է «գիտության եւ տեխնոլոգիաների ոլորտում մարդկային ռեսուրսների» պահանջարկը¹³, որոնք բաժին է ընկնում ԵՄ երկրների աշխատուժի մոտ 30%-ը: Զարգացած երկրները կիրառում են միզրագիտական հատուկ քաղաքականություն որոշակի մասնագետների եւ ուսանողների ներգրավման համար: Նախ՝ ներգաղթի ծավալների կրճատման ընդհանուր ֆոնին ընդլայնվում են ժամանակավոր աշխատանքի հնարավորությունները «պահանջված մասնագետների» համար: Կիրառվում են հատուկ ծրագրեր, որոնք խթանում են դեֆիցիտային մասնագետների ներգաղթը: Եվ վերջապես՝ բարձրակարգ մասնագետների համար հեշտացվում են վարձման գործընթացն ու պայմանները՝ չտեսահարելով նմանատիպ մասնագիտության տեղ հայրենասիրների իրավունքները: Ցավոք, ՀՀ այս առումով դասական դոկոր երկիր է, քանզի երիտասարդներից շատերը, ովքեր ուսում են ստանում դրսում եւ վերադառնում Հայաստան, հաճախ իրենց որակավորումը համարժեք աշխատանք չգտնելով՝ կրկին արտագաղթում են, ինչն արդեն կրում է անվերադարձ բնույթ: Բացի այդ, տարեցտարի ավելանում է այն պետությունների թիվը (Ճապոնիա, ԱՄՆ, Գերմանիա, Շվեյցարիա, Ֆրանսիա,

Ավստրալիա), որոնք արտասահմանցի ուսանողներին հնարավորություն են ընձեռում աշխատել սեփական տարածքում ուսումնական տեղեկություն հետո: Իսկ կանադական Քվեբեկում գոյություն ունեն հնգամյա «հարկային արձակուրդներ» SS, ճարտարագիտության, բժշկության և ֆինանսների ոլորտում աշխատող բարձրակարգ գիտնականների համար: Գիտության և բարձրագույն կրթության գլոբալացման գործում մեծ դեր ունի տեղեկատվա-հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը ԳՅՓԿԿ ոլորտում՝ էլեկտրոնային գիտության զարգացումը (e-Science), և կրթության ոլորտում (e-Learning): ՏՅՏ շնորհիվ տեղեկատվության և գիտական կյուբերի փոխանցման հնարավորության բարելավումը և աշխատանքների համակարգման մեխանիզմների պարզեցումը, վիրտուալ գիտական կոլեկտիվների ստեղծումը, որոնք, ի տարբերություն համագործակցության ավանդական ձևերի, հասանելի են դարձնում աշխարհագրորեն հեռավոր ռեսուրսները, հնարավորություն են ընձեռում համացանցում իրականացնել վերլուծական աշխատանքներ, մի կողմից ինչ-որ տեղ մեղմում են արտագաղթը, քանզի նվազեցնում են գիտնականների ֆիզիկական տեղափոխության անհրաժեշտությունը: Սակայն հարցը մնում է անկախ: չէ որ Նույն ՏՅՏ զարգացումը նպաստում է միջազգային կապերի ստեղծմանը և համագործակցությանը՝ նպաստելով արտասահմանյան գիտական կենտրոններում հետազոտական աշխատանքների իրագործմանն ու հետևաբար՝ արտագաղթին: Նույնը վերաբերում է նաև կրթության ոլորտին:

Պրա հետ մեկտեղ՝ իրագործվում են արտագաղթած գիտնականների հայրենադարձությանը նպաստող ծրագրեր, քանի որ միգրանտների վերադարձի հետ տեղի է ունենում ոչ միայն անհատական կրթության, այլև առաջատար տեխնոլոգիաների «վերադարձ»: Հայտնի է, որ Թայբեյի քաղաքային գիտական պարկում ստեղծված ֆիրմաների գրեթե կեսը ստեղծվել էր ԱՄՆ-ից վերադարձած միգրանտների կողմից, իսկ Յուկաստանում գոյություն ունի հատուկ ցանց՝ արտագաղթածների հետ կապի համար, որի շնորհիվ տեղի է ունենում ոչ միայն մասնագետների, այլև տեխնոլոգիաների, ներդրումների վերադարձ: Շվեյցարիայում գործում է «Ռեբրեյն» ծրագիրը՝ ուղղված ԱՄՆ-ից ու Ճապոնիայից գիտնականների հայրենադարձության ապահովմանը: Նմանատիպ ծրագրեր գոյություն ունեն ֆինլանդիայում, Գերմանիայում, Կանադայում, իսկ Ավստրիայում երիտասարդ տաղանդաշատ գիտնականներին վճարվում է հատուկ կրթաթոշակ՝ տեղի գիտահետազոտական ինստիտուտներում՝ նրանց աշխատանքի խթանման նպատակով¹⁴:

Այսօր ՀՀ-ում «ուղեղների արտահոսքի» հետ մեկտեղ օրակարգային հարց է դառնում «ուղեղների հայրենադարձությունը», քանզի միայն այդ դեպքում հնարավոր կլինի ապահովել տնտեսական կայուն զարգացում: Մինչդեռ առայսօր միգրացիայից «օգուտը» Հայաստանի՝ որպես դեռևս դոնոր երկրի համար կրում է ներուժային բնույթ՝ այն դեպքում, երբ իրական կորուստներն ակնհայտ են: ՀՀ մտավոր ներուժի զարգացման և ուղեղների արտահոսքի կանխման նպատակով անհրաժեշտ է.

- պետական հովանավորական քաղաքականության միջոցով ապահովել մտավոր սեփականության արդյունավետ զարգացումը,
- վերանայել վարձատրության համակարգը գիտության ոլորտում,
- նպաստել գիտական ներուժի փոխարեն գիտական մտքի արդյունքների արտահանմանը՝ կանխելով ուղեղների թե՛ ներքին, թե՛ արտաքին հոսքը,
- կարգավորել բուհերի և միջնակարգ մասնագիտական հաստատությունների ընդունելության ծավալները տնտեսության պահանջներին համապատասխան:

Չիախտելով մարդու ազատ տեղաշարժելու իրավունքը՝ պետությունը պետք է, նախ, կարգավորի արտագաղթի ուղղությունները, վերահսկի պայմանագրերի կատարման ընթացքը, ներառյալ՝ մարդու իրավունքների ոտնահարման, խտրականության բացառումը, ինչպես նաև աշխատանքի պայմանները և աշխատավարձի չափը: Երկրորդ, ստեղծի համապատասխան կառույցներ, որոնք կլուծեն հնարավոր ընդհարումները, իսկ պայմանագրի ժամկետի ավարտին կազմակերպի արտագաղթողների հայրենիք վերադարձը: Արտերկրում

գտնվող հայաստանցի աշխատանքային և այլ միգրանտների իրավունքների պաշտպանությունը պետք է իրականացվի միջազգային պայմանագրերի հիման վրա և այդ պայմանագրերի վերահսկումն իրականացնող մարմինների միջոցով: Այդ առումով կարելի է միգրանտ աշխատողների վերաբերյալ գոյություն ունեցող կոնվենցիաներին միանալ:

Գլոբալ տեղեկատվական հասարակության ձևավորման պայմաններում, երբ բազում երկրներ են պայքարում իրենց տարածք բարձրորակ իրական և ապագա մասնագետների ներգրավման համար, միգրացիոն հոսքերից հատկապես այդ հոսքը կառավարման և վերահսկման կարիք ունի: Իսկ Հայաստանի, առայժմ դոնոր երկրի, համար օրակարգային է արտագաղթի հասցեական քաղաքականության մշակումը՝ երկրի աշխատանքային, գիտական ներուժի պահպանման և զարգացման նպատակով: Միջազգային աշխատանքային միգրացիան պետք է լինի բաց և կազմակերպված՝ կողմերի փոխադարձ հարգանքի սկզբունքի վրա, ու հենց այս տեսակետից է կարելի մտածել ՀՀ-ն պետք է իր միգրացիոն քաղաքականության մշակի այնպես, որ հնարավորինս շատ օգտվի միգրացիայի ստեղծած հնարավորություններից՝ մարդկային զարգացման տեսակետից: Պետությունը պետք է մշակի գործող, ակտիվ քաղաքականություն, որը, չիախտելով մարդու իրավունքները, վերահսկի և կարգավորի միգրացիայի ուղղությունները: Իսկ ամենակարևորը՝ ի վերջո նպաստի հայրենադարձությանը:

1. World Migration Report 2010, *The Future of Migration. Building Capacities for Changes, Executive Summary*, www.iom.int/publications/bookstore/free/WMMR_2010_summary.pdf, www.worldbank.org/TOPICS/Resources/214970-1288877981391/Annual_Meetings_Report_DEC_IB_MigrationAndRemittances_Update24 Sep.10.pdf
2. Մարդկային զարգացման ազգային զեկույց: *Միգրացիա և մարդկային զարգացում. հնարավորություններ և մարտահրավերներ*, Հայաստան 2009, էջ 119
3. Jahir Calvo, *International Mobility of the Highly Skilled and Talented Individuals: Perspectives from Latin America*, 29.06.2011, www.guni-mies.net/news/detail.php?id=1742
4. www.backtoarmenia.am/?hcat=85&scat=87
5. *Women and Men in Armenia* 1999, Minstat RA, 1999, p. 10; Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Կիճ. վերլուծ. զեկույց, Եր. 2010, էջ 24
6. Մարդկային զարգացման ազգային զեկույց, նշվ. հրատ., էջ 102
7. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1996, ՀՀ վիճակագրության պետնոստրի և վերլուծության նախարարություն, Եր., 1998, էջ 40-41, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2006, ՀՀ ԱՎԾ, Եր., 2006, էջ 53
8. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2010, ՀՀ ԱՎԾ, Եր. 2010, էջ 151-152
9. www.scs.am/up/hrap_Amenpress_18.03.2011
10. *Ռազմավարություն առանց պատերազմի աշխատավարձի*, Կապիտալ, 112 (861), 12.06.2011
11. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2005, ՀՀ ԱՎԾ, Եր. 2005, էջ 73-75, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2006, ՀՀ ԱՎԾ, Եր., 2006, էջ 74-76
12. ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտության զեկույց, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, ՀՀ ԱՎԾ, Եր. 2008, էջ 63
13. *Ըստ Եվրոստատի և ՏՀԶԿ համատեղ սահմանման՝ «գիտության և տեխնոլոգիաների ոլորտում մարդկային ռեսուրսներին են դասվում անձինք, ովքեր հաջողությամբ ավարտել են գիտատեխնիկական ոլորտում կրթական երրորդ աստիճանը (գիտնականներ, ճարտարագետներ, դասախոսներ, բժիշկներ, մենեջրներ և այլն), ինչպես նաև անձինք, ովքեր, չունենալով համապատասխան դիպլոմ, աշխատում են այն ոլորտներում, ուր պահանջվում է նման որակավորում»:*
14. www.ecsocman.edu.ru/data/92-16/936/1223/037-058_Tsapenko_Migration.pdf